ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ Տաթևիկ Խաչատրյանի Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք. Տաթևիկ Խաչատրյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը. ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները. Ավստրիա (Վիեննա), 2024թ. օգոստոսի 27-ից 31-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC):

Գործուղման նպատակը. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (UNCAC) անդամ երկրների կոնֆերանսի (CoSP) Կիրարկման վերանայման խմբի (Implementation Review Group), Կոռուպցիայի կանխարգելման հարցերով աշխատանքային խմբերի հանդիպումներին:

Քննարկված թեմաները. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (UNCAC) անդամ երկրների կոնֆերանսի կիրարկմանը, կիրարկման վերանայման մեխանիզմին և կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետը համաժողովին ներկայացրել է «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կիրարկմանն ուղղված Հայաստանում իրականացված լայնածավալ հակակոռուպցիոն բարեփոխումները, ներկայացրել Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը՝ ընդգծելով միջազգային մոնիթորինգային մեխանիզմների կարևորությունը և վերահաստատելով Հայաստանի հանձնառությունը պատշաճ

իրականացնել «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի շրջանակներում ստանձնած միջազգային պարտավորությունները:

Տաթևիկ Խաչատրյանը ներկայացրել է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (UNCAC) կիրարկման մեխանիզմի 2-րդ շրջափուլի ընթացքում թեմատիկ հաջորդականության, ինչպես նաև կատարողականի գնահատման մեթոդաբանության վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումն ու առաջարկները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի 2-րդ շրջափուլի Հայաստանի զեկույցի հիմնական դրույթները (Executive summary) հրապարակելուց զատ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի քարտուղարություն ներկայացնել նաև բացատրական զեկույց/նշումներ՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների ընթացքում իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումները:

Կոնվենցիայի կիրարկման վերանայման խմբի նիստին Տաթևիկ Խաչատրյանը ներկայացրել է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի 2-րդ շրջափուլով սահմանված ՀՀ հանձնարարականների կատարման ընթացքը և դրանց ուղղությամբ արձանագրված ձեռքբերումները՝ անդրադառնալով հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամրապնդմանը, բարեվարքության ստուգման մեխանիզմների շարունակական կատարելագործմանը, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության կարևորությանը և ներառականության ապահովմանը:

ՀՀ արդարադատության նախարարության
հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի
վարչության մոնիթորինգի բաժնի պետ

Տաթևիկ Խաչատրյան

06.09.2024թ.